Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2022թ. դեկտեմբերի 29

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Սառա Գալստյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Գրիգորի Հովհաննիսյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Անահիտ Պապիկյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպություն
Մարուսյա Ճաղարյան	ֆիզիկական անձ
Տաթևիկ Կարապետյան	ֆիզիկական անձ
Աննա Սաֆարյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ
Աիդա Մուրադյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ
Գարիկ Հովհաննիսյան	«Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Տաթևիկ Ստեփանյան	նախարարի տեղակալ
Դավիթ Խաչատրյան	նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	նախարարի տեղակալ
Սամվել Մուրադյան	գլխավոր քարտուղար
Զարուհի Մանուչարյան	մամուլի քարտուղար

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **Ողջույնի խոսք. աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2022թ. գործունեության ամփոփում**

   (Ներկայացնող՝ Խորհրդի Նախագահ)

2. **Հարց ու պատասխան. քննարկում**

   Խորհրդի անդամներ (ՀԿ ներկայացուցիչներ, անհատներ)

   ԱՍՀ նախարար

   ԱՍՀ նախարարի տեղակալներ՝

   Տաթևիկ Ստեփանյան

   Դավիթ Խաչատրյան

   Ռուբեն Սարգսյան

1. Մինչ Խորհրդի տարեվերջյան ամփոփիչ նիստի հարցերին անդրադառնալը՝ Խորհրդի Նախագահը ողջունեց Խորհրդի մասնակիցներին՝ ներկայացնելով 2022 թվականին աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված բարեփոխումները՝ ժողովրդագրության, կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության ոլորտներում կատարված աշխատանքները: Այս համատեքստում Նախագահն ընդգծեց նաև գործընկեր կազմակերպությունների հետ սերտ համագործակցության կարևորությունը՝ նշելով,

որ վերջիններիս կողմից ստացված առաջարկներն ու դիտարկումները հնարավորություն են տալիս նախատեսված բարեփոխումները դարձնել առավել արդյունավետ:

Նախագահը տեղեկացրեց նաև, որ 2022 թվականի ընթացքում աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացրել է ոլորտային ռազմավարությունների մշակման գործընթացը՝ մասնավորապես աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026 թթ. ռազմավարությունը հնարավորություն է տալիս քաղաքացու կյանքի բոլոր փուլերում՝ նախածննդյան շրջափուլից մինչև կյանքի ավարտը, վերջինիս տրամադրել տարիքին և կարիքին համապատասխան ծառայություններ:

Նախագահը տեղեկացրեց, որ սոցիալական պաշտպանության ոլորտի հաջորդ կարևոր երկու փաստաթղթերն առնչվում են ժողովրդագրության և զբաղվածության ոլորտներին՝ հավելելով, որ նշված ուղղություններով նախարարությունը շարունակելու է իրականացնել հստակ ծրագրեր՝ ուղղված ծնելիության աճի բարձրացմանը, երեխա ունեցող ընտանիքներին՝ լրացուցիչ սոցիալական երաշխիքների տրամադրմանը, աշխատանքի միջոցով աղքատության հաղթահարմանը և այլն: Միաժամանակ, ընթացիկ տարվա ընթացքում շարունակվել են երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերը: Իրականացված փոփոխությունների արդյունքում՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ կնշանակվի նաև քաղաքաբնակ չաշխատող մայրերին. աշխատանքի վերադառնալիս կշարունակվի վճարվել նպաստի 85%-ի չափով՝ ներկայիս դադարելու փոխարեն:

Կենսաթոշակային ապահովության ոլորտում կանոնավոր կերպով աճում են անկանխիկ առևտրաշրջանառության ծավալները. կենսաթոշակների շուրջ 77%-ը վճարվում է անկանխիկ եղանակով: 2023 թվականից՝ 1000+ բնակիչ ունեցող գյուղական համայնքներում, իսկ 2024 թվականից ամենուր կենսաթոշակը կստանան անկանխիկ եղանակով (բացառությամբ 75 տարեկանից բարձր և հաշմանդամության 1-ին կամ 2-րդ խումբ ունեցողներ անձինք):

2022 թվականին կատարված բարձրացումների արդյունքում՝ միջին կենսաթոշակը 43,500 դրամից հասցվել է 46,200 դրամի, նվազագույնը՝ 26,500 դրամից՝ 31,600 դրամ: Ընթացիկ տարվա ընթացքում մեկնարկել է կենսաթոշակի և նպաստի 10 % հետվճարի, ինչպես նաև երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ 50,000 դրամ աջակցության ընթացիկ ծրագրերի իրականացումը:

Անդրադառնալով սոցիալական աջակցության ոլորտին, Նախագահը նշեց, որ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրված նախագիծը պատրաստ է քննարկման, որը հնարավորություն կընձեռի բարձրացնել ոլորտի ճկունությունը, հասցեական արձագանքել կարիքի գնահատմանը, ընդլայնել ծառայությունների տեսակները:

Աղքատության փուլային հաղթահարման նպատակով՝ շուրջ 300 շահառուից յուրաքանչյուրն ստացել է մինչև 1,6 մլն դրամ բիզնես դրամաշնորհ, իրականացվել է սննդային քարտերի տրամադրման պիլոտային ծրագիրը:

Անդրադարձ կատարելով զբաղվածության ոլորտին, տեղեկացրեց, որ 2023 թվականի հունվարի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը կբարձրացվի՝ 68,000 ՀՀ դրամի փոխարեն դառնալով 75,000 ՀՀ դրամ:

Միաժամանակ, զբաղվածության ռազմավարությունն իր տեսլականով, թիրախային խմբերով, նպատակներով ու փաստարկված ծրագրերով նախատեսվում է շրջանառել 2023 թվականին:

Ընթացիկ տարվա ընթացքում շարունակվել է **սոցիալական ծառայությունների տրամադրումը խոցելի խմբերին՝** երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց: Նախատեսվում է Անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ներդրում, որը հնարավորություն կընձեռի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկել նաև սոցիալական գործոնների համատեքստում և յուրաքանչյուր անձի տրամադրել անհատական կարիքներին համարժեք սոցիալական ծառայություններ:

2. Մարուսյա Ճաղարյանը նշեց, որ սոցիալական ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում զգալիորեն նկատելի է քաղաքացիների կյանքի որակի բարելավման դրական տեղաշարժը: Նաև առաջարկեց գործարկել նախարարության կողմից համակարգվող տվյալների հասանելիության այնպիսի բազա, որը հասանելի կլինի նաև համայնքային սոցիալական աշխատողներին ,որտեղ կարող են ընդգրկել հաշմանդամության կարգավիճակ ունեցող երեխաներ, խոցելի, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող շատ ընտանիքներ:

Հնչեցված առաջարկին ի պատասխան՝ նախարարի տեղակալ **Տաթևիկ Ստեփանյանը** պարզաբանեց, որ համապատասխան բազաներ առկա են, այդ թվում՝ «Փյունիկ», «Մանուկ» տեղեկատվական համակարգերը: Տ. Ստեփանյանի խոսքով՝ նախարարությունը բազաների

գործարկման խնդիր չունի, քանի որ «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը տիրապետում է անհրաժեշտ տվյալների:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչը, անդրադառնալով քաղաքաբնակ չաշխատող մայրերին տրամադրվող մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակմանը, նշեց, որ քաղաք և գյուղ չափանիշը չի արտացոլում ճշգրիտ պատկերը: Առաջարկեց անդրադառնալ նաև ապաինստիտուցիոնալացման քաղաքականությանը, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված ծրագրերին:

Ի պատասխան հնչեցված առաջարկին՝ Նախագահը պարզաբանեց, որ քաղաքաբնակ չաշխատող մայրերին տրամադրվող մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման գործընթացը բխում է ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը նպաստող քաղաքականությունից : Ինչ վերաբերում է ապաինստիտուցիոնալացման ծրագրին՝ Նախագահը շեշտեց, որ այն սոցիալական պաշտպանության ոլորտի կարևորագույն ռազմավարական ուղղություններից մեկն է, որը դիտարկվում է մի քանի ուղղություններով՝ անկախ կյանքի կենտրոնների կամ խմբային փոքր տների ստեղծմամբ:

Նախագահը առանձնացրեց նաև, որ առաջիկայում միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ աշխատանքներ են տարվելու, որն էլ խթան կհանդիսանա խնամատարության ինստիտուտի բարելավմանը: Ներկայումս 68 խնամատար ընտանիքի կողմից տրամադրվում է 105 երեխայի խնամք և դաստիարակություն:

«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցչի հարցին թե արդյո՞ք կենսաթոշակի գումարի 10 % հետվճարի ծրագիրը վերաբերում է բոլոր կենսաթոշակառուներին և ոչ թե միայն չաշխատողներին, Նախագահը նշեց, որ վերոնշյալ ծրագրից կարող են օգտվել բոլոր կենսաթոշակառուներն՝ անկախ աշխատելու կամ չաշխատելու հանգամանքից:

Տաթևիկ Կարապետյանն առաջարկեց ուշադրություն դարձնել համայնքներում առկա կացարանային և սոցիալական բնակարանային ֆոնդին առնչվող խնդիրներին և խնդրեց տեղեկություն տրամադրել առաջիկայում նախատեսվելիք փոփոխությունների վերաբերյալ:

Բարձրացված առաջարկին ի պատասխան՝ Նախագահը պարզաբանեց, որ նախարարության համակարգման ոլորտում առկա խնամքի հաստատություններում ժամանակավոր բնակվող անձանց խնդիրներին տրվում են տեղային լուծումներ:

Նախագահը տեղեկացրեց նաև, որ առաջիկայում նախատեսվում է մշակել սոցիալական բնակապահովության և բնակարանաշինության ռազմավարություն, որի համատեքստում կներդրվի մեկ սոցիալական բնակապահովության համակարգ՝ ներառելով հաշմանդամության խումբ ունեցող և բնական աղետի պատճառով տնակներում ապրող անձանց, ինպես նաև երիտասարդ ընտանիքներին: Առաջիկա քայլերն իրականացնելու նպատակով արդեն իսկ պայմանավորվածություն է ձեռք բերվել Կենտրոնական բանկի հետ:

«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչը անդրադարձավ 3-րդ և հաջորդ երեխայի ծնունդով պայմանավորված պետական աջակցության ծրագրի շրջանակում տրամադրվող գումարի բարձրացմանը: Արտահայտելով իր մտահոգությունը՝ խնդրեց պարզաբանել արդյո՞ք առկա է խորքային ուսումնասիրություն՝ ընտանիքներում երեխայի թվի աճի ճիշտ սոցիալական ուղղվածության և աղքատություն ունեցող ընտանիքներում ավելի շատ ծնունդներ չարձանագրվելու կապակցությամբ:

Հնչեցված հարցին ի պատասխան՝ նախարարի տեղակալ **Տաթևիկ Ստեփանյանը** նշեց, որ նախարարության կողմից իրականացվել է ժողովրդագրական իրավիճակի ռազմավարական վերլուծություն, որտեղ բարձրացված հարցի բոլոր պատասխանները տրված են: Նշեց նաև, որ հիմնականում ընտանիքի կառուցվածքը փոխվել է՝ 1-ին և 2-րդ երեխաները ուշ են ծնվում, քանի որ կնոջ ծննդաբերության միջին տարիքային շեմ է սահմանվել 28,4 և ավելի շատ ծնվում են կարգաթվով 3-րդ երեխաները:

«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչը կարևորագույն խնդիրներից համարեց նաև ՀՀ-ում աղքատության հաղթահարումը: Հարցադրման տեսքով խնդրեց պարզաբանել, թե արդյո՞ք դիտարկվում են մոդելների տարատեսակներ աղքատության, այդ թվում՝ ծայրահեղ աղքատության հաղթահարման համար: Ինչպես նաև առաջիկայում ներկայացվելիք ռազմավարության մեջ կլինե՞ն հստակ նախանշումներ, որոնք կներկայացնեն մյուս գերատեսչությունների կողմից ձեռնարկվելիք քայլերը:

Հնչեցված հարցին ի պատասխան՝ Նախագահը պարզաբանեց, որ ծայրահեղ աղքատություն չունենալը նաև Կառավարության գերակայությունների շրջանակում է, միաժամանակ անապահովության գնահատման համակարգը գործարկելու ժամանակ ըստ առաջնահերթությունների հստակ կտարանջատվեն սոցիալական ոլորտի անելիքները:

Նախագահը աղքատության հաղթահարման նպատակով մոդելների տարատեսակներին անդրադառնալով՝ նշեց, որ շուրջ 300 ընտանիք արդեն իսկ ստացել է 1,6 միլիոն դրամական օգնություն, որը նույնպես համարվում է աղքատությունը հաղթահարելու մոդելներից մեկը: Աղքատության հաղթահարման կարևոր գործոն է համարվում զբաղվածության ռազմավարությունը, քանի որ թիրախ խմբերի շրջանում անհրաժեշտ է խթանել զբաղվածությունը, վերջիններիս ներգրավել աշխատաշուկայում և աշխատանքի միջոցով հաղթահարել աղքատությունը:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի ներկայացուցիչն առաջարկեց զբաղվածության ծրագրերում հատուկ ուշադրություն դարձնել տարեցներին՝ կենսաթոշակառուներին նույնպես ներգրավելով նշված ծրագրերում:

Նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը պարզաբանեց, որ ծերացման խնդիրներին վերաբերող հարցը սոցիալական ոլորտի կարևորագույն խնդիրներից է: Ներկայումս ՀՀ-ում բնակչության 13%-ը 65+ տարիքի են: Առաջիկայում գործուն քայլեր են իրականացվում ակտիվ ծերացումը, կենսաթոշակառուների զբաղվածությունը ապահովելու ուղղությամբ: Շուրջ 89000 կենսաթոշակառու աշխատում են, որից 9000-ը ստանում է և՛ կենսաթոշակ, և՛ աշխատավարձ:

«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչը նշեց, որ վերջին վեց ամսվա ընթացքում շատ ակտիվ համագործակցել են ՄՄԾ տարածքային կենտրոնների հետ և ներկաների ուշադրությունը հրավիրեց աշխատանքի ընթացքում առաջ եկած մի շարք տեխնիկական խնդիրների (ինտերնետի հասանելիություն, նյութատեխնիկական բազա և այլն):

«Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամի ներկայացուցիչը, անդրադառնալով իր գործընկերների կողմից արդեն իսկ բարձրացված, նախարարության կողմից համակարգվող տվյալների հասանելիությունն ապահովող բազաների հարցին, նշեց, որ հաճախակի առնչվում են տեղեկատվական բազաների հասանելիության հարցին: Միաժամանակ խնդրեց տեղեկատվություն տրամադրել 2023 թվականին այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին:

Նախագահը նշեց, որ բարձրացված հարցը գտնվում է նախարարության ուշադրության կենտրոնում և վերոնշյալ ինստիտուտի կայացման նպատակով նախատեսվում է ամրագրել բարձր ուղենիշներ և հստակ քայլերի հաջորդականություն:

Խորհրդի մասնակիցները շնորհակալություն հայտնեցին 2022 թվականին տարբեր ոլորտներում իրականացված ծրագրերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվության տրամադրման և արդյունավետ համագործակցության համար:

Նիստի ավարտին Նախագահը շնորհակալություն հայտնեց հասարակական խորհրդի անդամներին ներկայության և ակտիվ մասնակցության համար՝ կոչ անելով 2023թ. համագործակցությունը շարունակել նույն տրամաբանությամբ, քանի որ քննարկման ընթացքում ներկայացված առաջարկներն ու դիտարկումները հնարավորություն են տալիս նախատեսվող բարեփոխումները դարձնել առավել կառուցողական և արդյունավետ:

X

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձանագրությունը կազմեց՝ Ա. Խաչատրյանը